Հայեր, այս լուսաւորեալ դարի մէջ մենք եւս այս շնորհքներից զուրկ չենք մնացել, ոչ. անա այդ ժամանակի արագ անիւը հասել է եւ մեզ համար. մեր կենաց դարեւոր տխրալի տեսարանն փոխուել է. մենք գտնվում ենք արդէն այնպիսի մտածմանց լայնութեան աստիճանի տակ, որ ամեներեան այժմ ուսման օգուտնեքն զգալով, բաց են արել իւրեանց հոգւոյ աչքերն անցեալ դարերի պատմութեանց վրայ. զգում են, որ ժողովրդոց յուզմունքներն նոցա թանձրամած խաւարի մէջ խարխափելով աւերակաց միջից իւրեանց ճակատագիրն որոնելու գլխաւոր պատճառն գիտութիւնն է եղել. եւ վասն որոյ այս տասն եւ իններորդ լուսաւորեալ դարում աշխարհի ամենայն կողմից բարձրաձայն բարբառում են, ուսումնարաններ, ուսումնարաններ:

Ո՛հ, քաղցր եւ մխիթարի՜չ ձայն . . .

Համայն ազգի այս ցանկութիւնն լրացնելու համար, անա շտապում է մեր Վեհափառ Հայրապետն, շնորհիւ Ամենողորմած Կայսեր, այս բարեպատեհ ժամում Սուրբ հողիս վերայ Նոր Ուսումնարանի հիմն դնելու. որով եւ իւր բազմախոնջ Սուրբ ճակատի վերայ յաւիտենական յիշատակաց արժանի այնպիսի պսակ ընդունեց, որ ամբողջ Հայկայ սերունդը անմոռանալի կերպիւ պիտի փառաւորեն: Վասն զի սորա հիմն նոցա ապագայ որդւոց համար, ազգութիւնը եւ կեանքը պիտի պահպանէ: Սորանից նորա պիտի սպասեն Մեսրովբի, Դաւթի, Գրիգորի եւ Շնորհալւոյ նման արթուն հովիւներ. այո, սա պէտք է բղխէ նոցա կենաց զարգացման համար առատ աղբիւրներ, որոց ամէն մի կաթիլը հազարաւոր, բիւրաւոր արգասիք պիտի առաջացնեն: Սա պիտի ծնանի վերջապէս լուսաւոր մոլորակներ հայոց աշխարհի դարեւոր մութն հորիզոնը լուսաւորելու, որոյ տակ այժմ բիւրաւոր քանքարներ տգիտութեան շղթաների գերի եղած գտան եւ արտասուալի վիճակի են ենթարկուած:

Այլ ինչ աւելի գեղեցկանական գործ կարող է սպասել Ձեզ. Վեհափառ Հայրապետ, քան թէ այս անմահացուցիչ եւ ազգաշահ գործն: Այլ ինչ անմոռանալի յիշատակ կարող էք թողնել աշխարհի վերայ, բացի այս գիտութեանց օրօրոցը, որի մէջ մատաղ մանկունք Հայոց հոգւով սնուած մեծացած, իւրեանց ազգին դրութեան դեղ եւ դարման պիտի լինին: Ձեր այս ազգաշահ գործոյն, Վեհափառ Հայրապետ, բոլոր ժողովուրդը անտարբեր չեն ամենեւին. նոքա արդէն պատրաստ են իւրեանց նիւթաւոր օգնութիւններով նպաստամատոյց լինիլ Ձեզ: Սորա կատարման համար նոքա իւրեանց վերջին ճիգն չեն խնայել եւ չպէտք է խնայեն, որտեղից նոքա ժամանակին իւրեանց կենսատու պտուղները պէտք է քաղեն:

Ձգեցէք արդ, Վեհափառ Տէր, ձգեցէք մի յուսահատուիք, Ձեր այդ Աստուածարեալ Սուրբ Աջը, եւ փարատեցէք այս խաւարամած տգիտութեան թանձր քողը Հայաստանի վերայից. կրկին շնորհեցէք, Տէր, շնորհեցէք նորա իւր նախնեաց հին փառքը, իւր Սուրբ Եկեղեցւոյ շքեղութիւնը առաւելացնող մեզ հոգեւորականներ պարգեւեցէք Ազգին, որոնք նոցա հօտին լինին անխոնջ հովիւներ:

Եւ անա բոլոր այս ծգանց փոխարէն, համայն ազգի կողմից մենք մեր խորին շնորհակալութիւններն մատուցանելուց յետոյ, խնդրում ենք Ամենակարող Աստուածանից, որ Ձեր կենաց թելը երկարատեւ անէ. որպէս զի այս դառն աշխատութեամբ ցանած սերմերի պտուղներն վայելէք, ի փառս Աստուծոյ եւ Ազգի:

Կեցցէ մեր Վեհափառ Հայրապետն. կեցցեն նորա խորհուրդներն. կեցցէ եւ մեր քաղցր Հայաստան:

Կ. Ֆոյեաչեան.

ՍԵՂԱՆԱՏԱՆ ԿԱՐԳԱՑՈՒԱԾԸ

ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ՀԱՅՐԱՊԵՏ

ԵՒ ԲԱԶՄԱԳՈՒՄԱՐ ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ

«Այսօր է զոր արար Տէր, եկայք ցնծասցուք եւ ուրախ եղիցուք ի սմա».

Ո՜հ ցնծութեան սերկեան աւուրս, յոր ակմբեալ մեր բոլոր՝
Փութամք յայտնել զսրտից բերկրանս Հաստատակաց մերդ Հօր.
Ընդ անցանել Վ.եհ Օծութեան Ձեր երկամեան տարեդարձ
Շնորհօք Հոգւոյն եօթնարփեան ՚ի հովուութիւն Հայկազանց:

Տաճարք Հայոց և առաւել մինչ մայրս մեր Էջմիածին
Պայր 'ի խորին սուգ դառնութեան զամ մի ողջոյն լալագին.
Եւ մինչ վերջինն շունչ հատանէր յերկարաձիգ խոթութեանց,
Ո՜հ անդին Տէր ամ մատնացոյց զՎ.հդ տաժիչ 'ի բարձանց։

Հրաւէր ապա առ Ձեզ կարգաց խղճալին մեր Հայաստան,
Վ.իրացն անթիւ բժշկութիւն Ձեզ միայն առ ապաստան.
Օ՜ի ում իցէ անկեալ մահիճ 'ի խիստ ցաւոց մահացու,
Ո՞չ ապաքէն պէտք են նմա բժիշկ ճարտար, կենատու։

Իսկ և Վ.հդ հայրենասէր, վաղ 'ի մորմոք 'ի կսկիծ,
Ընդ բաղդ հայոց որ 'ի հերուն սեւաբօղեալ 'ի թախիծ,
Ո՜չ անխայեալ զԸնձեղ գնել ըստ քաջ հովուին ոչխարաց,
Յանձն առեալ առնուլ 'ի ձեռս զղեկ ուղղութեան Հայրապետաց։

Ընդէն և անդ չու արարեալ՝ պլացայք ընդ ծով և ցամաք,
Յաջ և յահեակ դրօշս 'ի ծածան՝ 'ի խնդ շարժեալ Հայս համակ,
Փառք առաջնորդ Ձեզ ունելով և 'ի ձեռին ձիթենի,
Ժամանեցայք յերկիրն պարարտ, 'ի ծոց Արարատ մեր Սիոնի։

Ապա այսօ՛ր, այսօ՛ր էր զոր, Տէր զձեզ հատոյ բոլորեալ,
Պատկն հայոց, պատկ դաբնեայ երփնազունեղ զարդարեալ,
Եւ 'ի ձեռին ընդելուզեալ զեշխանականն դաւազան՝
Եւ մեզ Հովիւ օծեալ, լցեալ շնորհք Հոգւոյն Հօթնարփեան։

Հապա այսօ՛ր էր զոր, յամենուստեք Հայք 'ի կազմ՝
'Ի թիւնդ 'ի խինդ ձօնեին ձեզ սէր հաճութիւն պնդակազմ.
Բայսր և մեք, Վ.հափառ Տէր, յերկրարեղարձ Ձեր օծման,
Փութամք ձօնել զհաւատս, սա եղեցի մեզ նշան (վարդեայ փունջն)։

Օ՜ի Ձեօք 'ի մի նախանձելին յօդեալ 'ի սէր անտխեղծ,
Հեռո՜ւ 'ի մէնջ հեռ և նախանձ, կնիք սրտից մեր անեղծ,
Հանապազօր հաճոյացին հոտ անուշից մեր բուրմունք,
Յամայր ամօք վայելել խնամն Վ.հիդ Արեծի Հայկազունքս։

Երկարացին թեւք կենաց Ձեր, յոր պէ՛տս ունի Հայաստան.
Յաւարտ ածել զձեռնարկ շքեղ 'ի փառս ազգիս Աբրահամեան.
Բարահաճած մեզ մատակարել ազիտութեան բուց 'ի բուց,
Ձեօք ծաղեսցի յաշխարհն Հայոց արև կենաց Ջահապղծաց։

Հապա եղբարք, համախմբեալք 'ի մեծ Տօնիս յայս հանդէս՝
Եկայք ցնծալ 'ի սիրտ հոգի, գոչել 'ի մի ձայն կեցցէ՛ս
Հայրդ մեր Գէորգ Կաթուղիկոս, ծանիս հարեալ կրկնակի,
Կեցցէ՛ս՝ կեցցէ՛ս՝ կեցցէ՛ս յաւէրժ, կեցցէ՛ս զամս յոգնակի։

Փիլիպպոս Աբրահամեան Դաւառարդեանց։